ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՓՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Սյունիքի մարզ, գ. Չափնի, հեռ.՝ 077337347 էլ-հասցե՝ chapni.syuniq@mta.gov.am

"20" դեկտեմբերի 2016թ. № 49

Ձեր _____№_____

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետ Վ.Հակոբյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ են ներկայացվում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Չափնիի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի20-ի ընդունած № 31-Ա և №32-Ն որոշումները:

Առդիր՝ թերթ:

Հարգանքով՝ Ն.Թումանյան

Կատարող՝
Ս.Հակոբյան

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՍՏԻՑ № 10/05
23 12 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՋԱՓՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 դեկտեմբերի 2016 թվականի № 31 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՋԱՓՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ջափնիի համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ-3, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ջափնիի համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ջափնիի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի նիստի հետևյալ օրակարգը՝

1. Օ ր ա կ ա ր գ

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ջափնիի համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին:

Համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ _____ Լևոն Գևորգյան

Կողմ՝ _____ Իննեսա Մկրտչյան

Կողմ՝ _____ Ռազմիկ Հակոբյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆ**

«20» դեկտեմբերի, 2016թ գ.Ջափնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՓՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 դեկտեմբերի 2016 թվականի № 32-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՓՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 - 2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի և 32-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ-3, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Չափնիի համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Չափնիի համայնքի 2017 - 2021 թվականների զարգացման ծրագիրը համաձայն հավելվածի՝ կցվում է:

Համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ _____ Լևոն Գևորգյան

Կողմ՝ _____ Իննեսա Մկրտչյան

Կողմ՝ _____ Ռուբիկ Հակոբյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆ**

«20» դեկտեմբերի, 2016թ գ.Չափնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՉԱՓՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ
2017 – 2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳԻՐ

Համայնքի ղեկավար՝ Նորայր Թումանյան _____

Հաստատվել է՝ Չափնիի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 32-Ն որոշմամբ

գ.Չափնի

2016թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք .....
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն .....
   2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն .....
   2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը .....
   2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը .....
   2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները .....
   2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ .....
   2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն .....
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում .....
   3.1. Համայնքի զարգացման տեսլական .....
   3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ .....
4. ՀԶԾ ֆինանսավորում .....
5. ՀԶԾ մոնիթորինգ .....

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Չափնիի համայնքը ձևավորվել է 1991 թվականին Հայաստանի Հանրապետության նոր վարչատարածքային բաժանման արդյունքում: Համայնքի վարչական տարածքում է գտնվում Ըրկենաց բնակավայրը՝ ներկայիս Ըրկենաց թաղամասը և Հին Չափնի բնակատեղին՝ համայնքի կենտրոնից մոտ 1.5 կմ դեպի հյուսիս հեռավորության վրա:

Համայնքի կենտրոնի հեռավորությունը մարզկենտրոնից կազմում է 19 կմ, բարձրությունը ծովի մակարդակից 1040 մետր է:

Համայնքն ունի մեծ ներուժ և հնարավորություն բարձրացնելու բնակչության սոցիալ-տնտեսական մակարդակը, բարելավելու նրանց կենցաղային պայմանները, զարգացնելու հոգևոր մշակույթը և իր գեղատեսիլ բնությամբ և պատմամշակութակին հուշարձաններով գրավչություն առաջացնելու զբոսաշրջության համար : Սակայն ներկայիս ստեղծված իրավիճակը զգալի սպվեր է թողնում համայնքի գրավչության վրա: Համայնքի բնակչության զգալի մասը՝ մոտ 50 տնտեսություն իրականացնում է գյուղատնտեսական գործունեություն, զբաղվում անասնապահությամբ և հողագործությամբ:

Համայնքն ունի բազմաթիվ խնդիրներ և զարգացմանը խոչընդոտող լուրջ պատճառներ, որոնցից աշխատատեղերի բացակայության և գործազրկության բարձր մակարդակի պատճառով համայնքի մշտական բնակչության մոտ 20 աշխատունակ և վերարտադրության տարիքի երիտասարդներ մեկնել են արտագնա աշխատանքի արտերկիր: Գյուղտեխնիկայի բացակայության պատճառով բնակչությունը չի կարողանում մշակել հողամասերը, իսկ դրանցից իրականացրած խոտհարքը կատարում է ուշացած՝ մեծ դժվարությամբ հարևան համայնքներից վարձակալած գյուղտեխնիկայով: Բնակչության կենսամակարդակի բարձրացմանը և զբոսաշրջության խթանմանը խանգարում է համայնքում խմելու և կենցաղային ջրի ապահովման ցածր մակարդակը / շաբաթը 2 անգամ 3 ժամով/: Ոռոգման ջրատարի խողովակաշարի մաշվածության և խցանվածության հետևանքով ջրի մեծ կորուստների պատճառով այգիների ոռոգումը իրականացվում է ոչ լիարժեք և բնակիչները ունենում են եկամուտների զգալի կորուստներ:

Առաջիկա հինգ տարիների ընթացքում համանքի զարգացման համար կներկայացնեմ ծրագիր , որը կարտահայտի համայնքի ողջ բնակչության հավաքական կամքն ու ցանկությունը, ուստի ծրագրի նախագծի մշակման փուլերում ակնկալում եմ բնակչության ակտիվ մասնակցությունը ;

Առաջիկա 5 տարիների համար զարգացման հիմնական ուղղությունները և գերակա ոլորտներն եմ համարում բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական , մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել տարածաշրջանային զբոսաշրջության համար գրավիչ վայր, մաքուր, բարեկարգ և գրավիչ բնակավայր; այն է իրականացնել գյուղատնտեսական

նշանակության հողերի լիարժեք մշակում,ապահովել գյուղատնտեսական արտադրանքի ծավալների աճը, արդյունաբերական թափոններից՝ ՀՄՄԿ-ի պոչամբարի վնասակար արտանետումներից համայնքի բնակչության և շրջակա միջավայրի պահպանության խնդիրներին տալ լուծում, բարերարներ գտնելու միջոցով իրականացնել հանրապետական նշանակության պատմամշակութային հուշարձանի՝ 1912-1914 թվականներին կառուցված եկեղեցու վերանորոգումը, զարգացնել զբոսաշրջությունը, հավաքագրել շրջապատում առկա աղբյուրների ջրերը գործող ջրավազանի մեջ և ապահովել բնակչության շրջօրյա ջրամատակարարումը, վերանորոգել և վերակառուցել ոռոգման համակարգի ջրատարը:

Հաշվի առնելով, որ համայքի ավագանին և բնակչությունը պատրաստ է համատեղ ջանքերով հաղթահարել համայնքի առջև առաջացած խնդիրները , 2017- 2021 թվականներին համայնքի կայուն զարգացման համար առաջիկա տարիների ընթացքում առաջարկում եմ իրականացնել է հետևյալ ծրագրերը '

1.Գյուղտեխնիկայի ձեռք բերում - 25 000000 ՀՀ դրամ - 2017 թվական

2.Եկեղեցու վերանորոգում -55 000000 ՀՀ Դրամ - 2018 թվական

3.Խմելու ջրի ցանցի վերանորոգում – 10 000000 ՀՀ դրամ – 2019 թվական

4.Ոռոգման ջրագծի վերանորոգում – 5 000000 ՀՀ դրամ - 2020 թվական

5.Հանդիսությունների տան վերանորոգում – 2 000000ՀՀ դրամ – 2021 թվական

2.Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1.Համայնքի ընդհանուր նկարագրություն

Աշխարհագրական դիրքը, պատմական համառոտ ակնարկ

Չափնիի համայնքը , որն ընդգրկում է ներկայիս Չափնի և նախկին պատմական Ըրկենաց գյուղերը / ներկայումս Ըրկենաց թաղամաս/, գտնվում է մարզկենտրոնից 19 կմ դեպի հյուսիս: Նրա բնակիչները ներկայիս Չափնի տարածք են տեղափոխվել Արցախի Հադրութի շրջանից 19-րդ դարի կեսերին և Հին / Քոյնա/ Չափնի գյուղից 20-րդ դարի 30-ական թվականներին , իսկ Ըրկենաց թաղամասում բնակվում են հիմնականում նախկին Ըրկենաց գյուղի բնակիչները: Համայնքում պահպանված է 2 եկեղեցի՝ մեկը Չափնիի տարածքում ՝ կառուցված 1912-14 թվականներին, որն անհապաղ վերանորոգման կարիք ունի , իսկ մյուսը Ըրկենաց թաղամասում՝ կառուցված 1906 թվականին և ձիթարանը՝ կառուցված 1982 թվականին ՝ կանգուն վիճակում են :

Համայնքի տարածքը մասնատված է բարձր լեռների, սարավանդների ու խորը գետահովիտների բարդ համադրության որոնք համայնքին տալիս են գեղատեսիլ տեսք: Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1040 մետր: Համայնքի կլիմայական պայմանները բարեխառն են՝ մեղմ ձմեռով ու համեմատաբար խոնավ, հուլիսի միջին ջերմաստիճանը կազմում է 30° :
Համայնքի վարչական տարածքը 1047.5 հա է; որից 643 հա 'գյուղատնտեսական նշանակության հողեր / 88 հա վարելահող . 35 հա խոտհարք, 110 հա արոտ, 410 հա այլ հողատեսքեր/;
29 հա բնակավայրերի նշանակության , 2.5 հա արդյունաբերական և արտադրական նշանակության օբյեկտների, 5.6հա էներգետիկայի, տրանսպորտի, կոմունալ ենթակայության օբյեկտների, 4.9 հա պատմական և մշակութային տարածքներ, 357 հա անտառային հողեր և 5.5 հա ջրային հողեր:
Ներկայումս համայնքում բնակվում են 96 հոգի,
Բնակչության տարիքային կազմը հետևյալն է՝

Բնակչության ընդհանուր թվաքանակը	*96*	*0-4*	*5-15*	*16-62*	*63 և բարձր*
		1	*11*	*49*	*35*
Այդ թվում Տղամարդիկ	*52*	*1*	*9*	*29*	*13*
կանայք	*44*	*0*	*2*	*20*	*22*

Համայնքում փախստականներ չկան:
Համայնքը խոշորացված չէ:

2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն 2015 թվականի համար կազմել է 4578.0 հազ.դրամ, իսկ 2016 թվականի համար նախատեսված է 5698.8 հազ.դրամ, որից 4588,5 հազ.դրամ վարչական բյուջեն է, իսկ 1110.3 հազ.դրամ՝ ֆոնդային բյուջեն ,որն ձևավորվել է տարեսկզբի ազատ մնացորդից:

Տարի	Վարչական բյուջե	Սեփական եկամուտներ	Ընդհանուր եկամուտներից սեփական եկամուտ. %	Տարեսկզբի ազատ մնացորդներից՝ ֆովդային բյուջե
2015	4578.0	450.5	9.8	0
2016	4588.5	452.0	9.8	1110.3

Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը 2015 թվականի համար կազմում է 450.5 հազ.դրամ (9.8%) , իսկ 2016 թվականի համար կազմում է 452.0 հազ.դրամ (9.8%)՝ տես վերը նշված աղյուսակի:
Համայնքում հիմնական արդյունաբերական ձեռնարկություններ և արդյունաբերական արտադրանք տվող կազմակերպություններ չկան

Համայնքում գործում է մեկ առևտրի կետ և մեկ գիշերային ակումբ, որը գտնվում է բնակավայրից 3 կմ հեռավորության վրա և որոնց ծառայությունների թույլտվության համար գանձվում է տեղական տուրք:

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, հատիկաընդեղային, բանջարաբոստանային մշակաբույսերի ու կարտոֆիլի արտադրությամբ և հացահատիկային կուլտուրաներից ցորենի արտադրությամբ և տարեկան արտադրության ծավալները կազմում են՝ հացահատիկային և հատիկաընդեղային մշակաբույսերից 610 ցենտներ, բանջարաբոստանային մշակաբույսերից 276 ցենտներ, կարտոֆիլ 800 ցենտներ, հավաքվել է պտուղ և հատապտուղ 92 ցենտներ, կուտակվել է բազմամյա խոտ ցանովի 2000 ցենտներ ,ծղոտ 300 ցենտներ. Հավաքվել է մեղր 2000 ցենտներ, անասնապահության արդյունքից ստացվել է մոտ 80000 լիտր կաթ, 60 ցենտներ տավարի միս, 10 ցենտներ խոզի միս , մոտ 20000հատ հավկիթ:
Արտադրված գյուղատնտեսական մթերքները հիմնականում սպառվում են արտադրվող տնտեսություններում և վաճառվում է համայնքի այլ տնտեսություններին: Համայնքին մոտիկ շուկա չկա, ուստի տնտեսությունները իրենց մթերքները իրացնում են մարզկենտրոնի գյուղատնտեսական շուկայում և տալիս վերավաճառման:

Համայնքը զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող մի շարք բնական, պատմական և մշակութային հուշարձաններ ունի:

Համայնքում դպրոցական, նախադպրոցական և արտադրպրոցական կրթական հաստատություններ, ԲՈՒՀ-եր գոյություն չունեն ՝ դպրոցահասակ 11 երեխաներց 9-ը հաճախում են մոտակա՝ 5 կմ հեռավորության վրա գտնվող Եղեգ համայնքի հիմնական դպրոցը, իսկ 2 երխա հաճախում են մարզկենտրոնի դպրոցները: Նախադպրոցական հասակի մեկ երեխա հաճախում է մարզկենտրոնի ՆՈՒՀ:

Համայնքում ստեղծված է է մեկ գյուղական բուժկետ, որտեղ աշխատում է մեկ բուժքույր և ունենում է տարեկան 45 այցելու:
Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 5 ընտանիք,
որոնցից 2 ընտանիքը՝ հաշմանդամության խումբ ունեցող և 3 երեխա ունեցող ընտանիք են, 1 ընտանիքը ՝ գործազուրկ են և 2 երեխա ունեցող ընտանիք է , 1 ընտանիքը՝ միայնակ ծեր է և 1 ընտանիքը՝ մանկուց հաշմանդամություն ունեցող 2 զավակներից կազմված 3 հոգանոց ընտանիք է:

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ և վերամշկմամբ

h/h	Բնակչության զբաղվածությունը ըստ ոլորտների	Զբաղվածների քանակը	
		Կին	տղամարդ
1	Տեղական ինքնակառավարում	4	2
2	Կազմակերպություններում	0	1
3	Գյուղատնտեսական աշխատանքներով	35	22
4	Այլ բնույթի ոչ գյուղատնտեսական աշխատանքներով	2	3

2.3.Համայնքում իրականացվող ծրագրերը

Համայնքի զարգացման համար 2017-2021 թվականների համար նախատեսում ենք իրականացնել 97 մլն. դրամի ծրագրեր, որոնք են՝

1.Գյուղտեխնիկայի ձեռք բերում, որի համար նախատեսում ենք կատարել 25 մլն. դրամի ծախս և որի արդյունքում կավելանա մշակվող գյուղատնտեսական հողերի քանակի և համայնքի բնակչությունը կունենա եկամտի տարեկան աճ:

2.Եկեղեցու վերանորոգում, որի համար նախատեսում ենք կատարել 55 մլն. դրամի ծախս և որի արդյունքում համայնքում կզարգանա հոգևոր մշակույթը և զբոսաշրջային գրավչություն կառաջացնի:

3.Խմելու ջրի ցանցի վերանորոգում, որի համար նախատեսում ենք կատարել 10 մլն. դրամի ծախս և որի արդյունքում կզարգանա համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական մակարդակը և կունենան եկամտի տարեկան աճ:

4.Ոռոգման ջրագծի վերանորոգում, որի համար նախատեսում ենք կատարել 5 մլն. դրամի ծախս որի արդյունքում կզարգանա համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական մակարդակը, կավելանա համանքում մշակվող գյուղատնտեսական հողերի քանակը և կունենանք եկամտի տարեկան աճ:

5.Հանդիսությունների տան վերանորոգում, որի համար նախատեսում ենք կատարել 2 մլն. դրամի ծախս և որի արդյունքում կունենանք բնակչության բավարարվածությունը:

Ծրագրերի իրականացման համար ֆինանսավորման աղբյուրները դեռևս հայտնի չեն, սակայն տարվում են աշխատանքներ այդ ուղղությամբ պարզելու հնարավոր ֆինանսավորման աղբյուրները, մասնավորապես գտնել միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններ կամ էլ փորձել տեղացի և արտասահմանյան բարերարներ գտնել :

Համայնքի վարչական տարածքում պետության կողմից առաջիկա հինգ տարիների համար նախատեսվող հանրապետական և մարզային ծրագրերը հիմնականում կրում են շարունակական բնույթ, մասնավորապես պետ բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տամադրվում է դոտացիաներ, նախատեսվում է կատարել բնապահպանական ծրագրեր:

Հարևան համայնքների հետ համատեղ գալիք հինգ տարիների համար նախատեսվող (շարունակվող) միջհամայնքային համագործակցության նպատակային ծրագրեր չկան , սակայն դաշտային սեզոնային բերքահավաքների ժամանակ միջոցառումները և փոխհամագործակ-ցությունները շարունակական բնույթ են կրում:

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Համայնքի 2015-2016թթ բյուջեների մուտքերի ու ծախսերի ցուցանիշները և 2017-2021 թթ բյուջեների մուտքերի ու ծախսերի կանխատեսումները

Հ/հ	Մուտքերի անվանումը	2015 փաստ	2016 նախատես	2017 կանխ	2018 կանխ	2019 կանխ	2020 կանխ	2021 կանխ.
1	2	3	4	5	6	7	8	9
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝	4587.0	5698.8	3964.1+ 25000	4000+ 55000	6000+ 10000	6000+ 5000	6000 +2000
1.	Ընդամենը սեփական եկամուտներ	450.5	452.0	464.1	500	2500	2500	2500
1.1	Հարկեր՝ որից	236.3	227	233.1	230	230	230	230
1.1-1	Հողի հարկ	198.5	173.8	164.5	160	160	160	160
1.1-2	Գույքահարկ	37.8	53.2	68.6	70	70	70	70
2	Տեղական տուրքեր	14	10	50	60	70	70	70
3.	Գույքի՝հողի, վարձակալությունից և վաճառքից եկամուտներ	200.2	215	181	330	2200	2200	2200
4.	Համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ պակասորդի ֆինանսավորման աղբյուրները	3595.5	4136.	3500	3500	3500	3500	3500
5	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը	0	1110.3	0	0	0	0	0
6	Արտաքին աղբյուրներ	0	0	25000	55000	10000	5000	2000
	ԾԱԽՍԵՐ՝ որից	3476.7	5698.8	3964.1+ 25000	4000+ 55000	6000+ 10000	6000+ 5000	6000 +2000
	Վարչական բյուջեի ծախսեր	3476.7	4588.5	3964.1	4000	6000	6000	6000
	Ֆոնդային բյուջեի ծախսեր, որից՝	0	1110.3	25000	55000	10000	5000	6000
	Ծրագրերի իրականացման համար ծախսեր	-	-	25000	55000	10000	5000	2000

Բյուջետային մուտքերը 2015 թվականի համար կազմել է 4587 ,0 հազ.դրամ և այն ծախսվել է կառավարման ապարատի պահպանվան վրա, իսկ 2016 թվականների համար 5698.8 հազ. դրամ ', որից 4588.5 հազ.դրամը նախատեսված է կառավարման ապարատի պահպանման համար, իսկ տարեսկզբի ազատ մնացորդից առաջացած 1110.3 հազ դրամը նախատեսված է ծախսել ֆոնդային բյուջեի համար:

2017-2021 թվականների համար կանխատեսում ենք բյուջետային մուտքերի ավելացում: Մենք մտածում ենք ծրագրերի իրականացման համար բյուջետային մուտքերի ավելացում 2017 թվականին 25000 հազ.դրամով, 2018 թվականին 55000 հազ.դրամով, 2019 թվականին 10000 հազ.դրամով, 2020 թվականին 5000 հազ.դրամով և 2021 թվականին 2000 հազ.դրամով, որոնք կգնան ծրագրերի իրականացման ծախսերի վրա: Ներկայումս դոտացիաները տրվում է հիմնականում վարչական ապարատի ծախսերի համար, այն ինչ ծրագրերի իրականացումից առաջիկայում ակնկալում ենք ստացվող արդյունքներից եկող եկամուտները ծախսել համայնքի զարգացման համար:

2.5.Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Համայնքն ունի մի շարք հիմնական խնդիրներ, որոնցից որպես պարտադիր խնդիրներ կարելի է առանձնացնել

-համայնքի բնակչության թվի նվազումը՝ որը պայմանավորված երիտասարդության արտահոսքով, որոնք էլ ընտանիք են կազմում ու բնական աճ են տալիս համայնքից դուրս և բնակչության քանակի բնական անկմամբ; Համայնքում բնական աճի նվազեցումը կարելի է կասեցնել համայնքում աշխատատեղերի ստեղծումով, որը կնպաստի համայնքից դուրս եկող երիտասարդության հոսքի կրճատմանը և այլ անձանց վերաբնակեցմանու և տնտեսություն վարմանը համայնքում: Համայնքում բուժսպասարկման մակարդակը գտնվում է շատ ցածր մակարդակում :

- Համայնքն ունի 643 հա գյուղատնտեսական նշանակության հողեր , որոնցից 88 հա վարելահողերից մշակվում է միայն 20 հա՝ 22.7%, 35 հա խոտհարքից օգտագործվում է միայն 10հա՝ 28.6%: Հողատարածքները չեն մշակվում և ռացիոնալ չեն օգտագործվում համայնքում գյուղատնտեսական տեխնիկայի բացակայության պատճառով: Հողատարածքները չշմշակման հետևանքով թփակալված, հողմնահարված և հողատարափ վիճակում են:

-Համայնքում խմելու ջրի ներտնտեսային համակարգի խողովակաշարերի մաշվածությունը շատ մեծ է և ջրի կորուստների մակարդակը հասնում է մոտ 70% -ի: անձրևաջրերն ու կեղտաջրերը հաճախ ներթափանցում են խմելու ջրի ցանց, որը վտանգավոր է դարձնում ջրի օգտագործումը: Խմելու ջրի մատակարարումը կատարվում է ընդհատումներով , շաբաթը երկու անգամ , ջրամատակարարման ցանցի մաշվածության ու ջրի անբավարար քանակության կուտակման պատճառով, համայնքը չունի ջրահեռացման համակարգ: Համայնքի ջրային ավազանը հարուստ է աղբյուրներով, որը կենտրոնացման կարիք ունի:

-Ոռոգման ցանցի մաշվածության հետևանքով ջրի մեծ կորուստների պատճառով ջրամատակարարումը իրականացվում է ոչ լիարժեք, տնտեսությունների մոտ 60 %, զրկված են ոռոգման հնարավորությունից և կանխատեսվելիք բերքից :

-Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի վիճակը շատ ցածր մակարդակի է՝ շաբաթը մեկ անգամ ավտոբուս է երթևեկում մարզկենտրոնից-համայնք: Համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկներ և կազմակերպություններ չկան: Մարդատար և երթուղային տաքսիների ծառայության համար օգտվում են մարզկենտրոնի ծառա յություն-ներից:

-Ներհամայնքային փողոցների և ճանապարհների վիճակը անմխիթար է, կարիք ունի խճապատման և ասֆալտապատման:

-Համայնքի բնության և շրջակա միջավայրի պահպանության վրա մեծ բացասական ազդեցություն ունի Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի պոչամբարի արդյունաբերական թափոններից առաջացած վնասակար արտանետումները և վնասակար արտանետումներից առաջացած շրջակա

միջավայրի քիմիական վնասակար ազդեցությունը բացասաբար է անդրադառնում բնակիչների ինքնազգացողության , կենդանիների վերարտադրողության (հաճախակի հանդիպվող վիժումներ) , մրգատու ծառերի և մշակովի կուլտուրաների բերքատվության վրա:

-Կենցաղային թափոնները և աղբահանությունը կազմակերպվում է անհատական ձևով, առանձնացված աղբավայրերում, որի հետևանքով պլաստիկատե շշերը և տոպրակները քամուց տարածվում են շրջակա միջավայրում , շրջակա միջավայրի աղտոտում և ոչ գեղատեսիլ տեսք տալիս:

- Համայնքում կա մշակույթի տուն,որի մեջ ներառված են ակումբը և գրադարանը , սակայն ժամանակակից տեխնոլոգիներով վերազինված չլինելու՝ ինտերնետ ակումբ չունենալու պատճառով հաճախողների թիվը քիչ է:

- Համայնքն ունի մեկ խաղահրապարակ՝ անմխիթար վիճակում է, ունի նորոգման և գույքային՝ մարզական գործիքներով համալրման կարիքներ, :

-Բակային տարածքները բարեկարգման կարիք ունեն:

-Համայնքի 92 առանձնատներից 10-ի վիճակը վթարային է:

-Համայնքում կա 2 գերեզմանատուն, որոնցից 1-ում՝ Զատնի գյուղի հատվածում, տարածված է արագ բազմացող ծառեր, որոնք էլ սպառնում են փլուզել ննջեցյալների հիշատակին կառուցված հուշակոթողները , դժվարեցնում հիշատակման օրերին բնակիչների այցելությանը հարազատների շիրիմներին:

2.6.Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

- *Համայնքի ուժեղ կողմերը*

  -Համայնքի աշխարագրական դիրքը՝մոտիկ է մարզկերտրոնին և մայրուղղուն:

  -643 հա գյուղատնտեսական նշանակության հողերի առկայություն, որից

1	*88 հա*	*վարելահող*	*Հացահատիկային կուլտուրաներ և մշակաբույսերի համար*
2	*35 հա*	*խոտհարք*	*Անասնակերի կուտակման համար*
3	*110 հա*	*արոտ*	*Անասնագլխաքանակի ավելացման և արածեցման հնարավորություն*
4	*410 հա*	*Այլ հողատեսքեր*	*Այգիներ ստեղծելու և վայրի բնությունից հատապտուղներ հավաքելու հնարավորություն*

-Անտառամերձ գոտու, տեսարժան վայրերի, պատմամշակութային հուշարձանների առկայություն, տուրիզմի զարգացման հնարավորություն

-Խմելու ջրի ներհամայնքային համակարգի առկայություն

-Ոռոգման ներհամայնքային համակարգի առկայություն

-Բնակիչների աշխատասիրություն

- *Համայնքի թույլ կողմերը*

  -Սոցիալապես անապահով բնակչության բարձր տոկոսը

  -գյուղտեխնիկայի բացակայությունը

  -ՀՊՄԿ-ի պոչամբարի առկայությունը

  -Խմելու ջրի և ոռոգման համակարգերի վերանորոգման անհրաժեշտություն

  -զբոսաշրջության գրավչության համար համայնքի գեղատեսիլ վայրերի մասին տեղեկություն չներկայացնելը

  -գազաֆիկացիայի բացակայություն

- *Հնարավորությունները*

  Աշխատուժի առկայություն- ավելի քան 25 հոգի ունեն բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն

- *Սպառնալիքներ*

  - ՀՊՄԿ-ի պոչամբարի վնասակար ազդեցությունը

  -Բնակչության արտահոսքը համայնքից

3.Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1.Համայնքի զարգացման տեսլական

2017-2021 թվականների համար Համայնքի Զարգացման Ծրագրերն իրականացնելու արդյունքում հինգ տարիների ընթացքում համայնքում տեղի է ունենալու մի շարք փոփոխություններ. այն է՝

-Կբարձրանա համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական մակարդակը,
-Կխթանվի գյուղատնտեսության զարգացումը
-Կբարեկարգվի համայնքը
-Կավելանա համայնքում գրանցված բնակիչների թիվը,
-Կունենաք համայնքի՝ գյուղատնտեսությամբ զբաղվող բնակիչների եկամտի տարեկան աճ,
-Կավելանա համայնքի մշակվող գյուղատնտեսական հողերի քանակը,
-Համայնքապետարանը հնարավորություն կունենա կազմակերպել մշակութային և մարզական միջոցառումներ, երեխաների և պատանիների այցելություններ համայնքից դուրս մշակութային օջախներ :

1.Գյուղտեխնիկա ձեռք բերելով համայնքում կզարգանա գյուղատնտեսությունը, կմշակվեն ավելի շատ գյուղ.նշանակության հողեր, կավելանա բնակիչների եկամուտները, նոր հողեր վարձակալության տալով կաճեն համայնքի սեփական եկամուտները, որի շնորհիվ կլուծվի մի շարք համայնքային խնդիրներ:

2.Եկեղեցու վերանորոգմամբ կզարգանա համայնքում հոգևոր մշակույթը և զբոսաշրջության դրանման համար գրավչություն կառաջանա:

3.Խմելու ջրագծի և ոռոգման ջրատարի համակարգերի վերանորոգման արդյունքում կբարելավվի համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական մակարդակը, եկամուտների աճ կունենան, կմշակվեն ավելի շատ հողեր, կավելանա համայնքում գրանցված բնակիչների թիվը, համայնքը կունենա սեզոնական եկամուտների աճ:

4.Հանդիսությունների տան վերանորոգումով համայնքի բնակչությունը բավարարվածության զգացողություն կունենան՝ արժանավայել վայրում հանդիսություններ կազմակերպելու համար:

Առաջիկա տարիների ընթացքում համայնքի զարգացման հիմնական ուղղությունները լինելու են համայնքի բնակչության բարեկեցության բարձրացումը, աղքատության կրճատումը ու եկամուտների աճը և զարգացման համար խթաններ կարող են հանդիսանալ գյուղատնտեսության զարգացումը և համայնքի բարեկարգումը :

- գյուղտեխնիկա ձեռք բերելով և ոռոգման խնդիրը լուծելով հնարավորություն կընձեռնվի ավելի շատ հողամասեր մշակել, աղքատ ընտանիքներին անվճար գյուղ տեխնիկա տրամադրել և տալ առանց վարձակալության վճարի հողեր մշակելու համար նպաստելով աղքատության կրճատմանը համայնքում:

Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքները 5 են, որի հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով), 2016 թվականի համար կազմում է -10%, 2020 թվականից կկազմի -5%,

Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճը_արտահայտված տոկոսով կկազմի՝ 2017թ.-3% , 2018թ.-10 %, 2019թ.-100 % , 2020թ.-200% , 2021թ.- 500% Համայնքային պայմանների բարելավման արդյունքում համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխություն տեղի կունենա, մարդիկ կգան գրանցվելու գյուղում հողեր մշակելու համար և բնակչության աճը նախորդ տարվա համեմատ՝ չպայմանավորված բնական աճով,կկազմի 30%:

3.2.Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

Առաջիկա տարիների ընթացքում համայնքն ունի մի շարք նպատակներ, որոնց իրականացումից է կախված համայնքի կայուն զարգացումը. դրանցից են՝

<u>Գյուղատնտեսական հողերի մշակում.</u>

Այս նպատակը իրականացնելով կանխատեսում ենք համայնքում գյուղատնտեսության զարգացում, բնակչության եկամուտների աճ, համայնքի սեփական եկամուտների աճ, աղքատ ընտանիքների քանակի նվազում, գրանցված բնակիչների թվի փոփոխություն :

Խնդրի լուծման համար անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ

1.Ձեռք բերել գյուղտեխնիկա;

Ձեռք բերելով գյուղտեխնիկա համայնքում կխթանենք գյուղատնտեսության զարգացմանը: Նախկինում մշակվում էր գյուղ.նշանակության հողերից 20 հա վարելահող և խոտ հունձ էր իրականացվում 10 հա տարածքից, ծրագրի իրականացմամբ կմշակվի 80 հա վարելահող և 35 հա տարածքից խոտհունձ կիրականացվի;

Ծրագիրը ցանկանում ենք իրականացնել 2017 թվականին, որի համար անհրաժեշտ կլինի 25 մլն. դրամի չափով գումար, սակայն առ այսօր ֆինանսավորման աղբյուրները հայտնի չեն: Ֆինանսավորման խնդիրը լուծելու համար բանակցություններ է ընթանում ՀՊՄԿ-ի տնօրինության հետ, ակնկալելով համայնքի մոտ 60հա գերակա շահ ճանաչված հողատարածքները նրանց կողմից իրացնելուց փոփհատուցվող գումարների վճարման հաշվին:

2. <u>Համայնքի բարեկարգում՝ եկեղեցու վերանորոգում</u>

Այս նպատակին հասնելու համար կանխատեսում ենք վերանորոգել համայնքում գտնվող 1912-1914 թվականներին կառուցված եկեղեցին, որը հանրապետական նշանակության պատմամշակութային հուշարձան է: Վերանորոգելով հուշարձանը կակտիվացնենք համայնքի հոգևոր մշակույթը, համայնքի գեղատեսիլ բնությամբ և առկա պատմամշակութային հուշարձաններով կստեղծենք գրավչություն զբոսաշրջության զարգացման համար, որի արդյունքում կունենաք համայնքի բնակչության եկամուտների և գրանցվածների քանակի աճ:

Գյուղամիջյան եկեղեցին գտնվում է աղետալի վիճակում, փլուզման եզրին՝ վտանգ սպառնալով շրջապատի մարդկանց կյանքին: Եկեղեցու փլուզման արդյունքում կվնասվեն հարակից տները , որոնց հեռավորությունը եկեղեցուց կազմում է 5 մետր, կփակվի գյուղամիջյան հետիոտն ու ավտոճանապարհները, որոնք անմիջապես եկեղեցուն հարակից են ընթանում:

Ծրագիրը նախատեսում ենք իրականցնել 2018 թվականին:

Իրականացնելով այս ծրագիրը համայնքը կունենա կանգուն, գործող եկեղեցի, բնակչությունը հնարավորություն կունենա եկեղեցական ծիսակատարություններ , մոմավառություններ կատարել համայնքի ներսում: Ծրագիրը կխթանի բարեգործությանը, համայնքում զբոսաշրջության զարգացմանը, համայնքի բնակչության բարեկեցության բարձրացմանը:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է կլինի 55 մլն. դրամի չափով գումար:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները հայտնի չեն, ընթանում են բանակցություններ, մտածում ենք այն կկատարվի բարերարների ու դոնոր կազմակերպությունների միջոցներով:

3.<u>Համայնքի բարեկարգում՝ Խմելու ջրի ցանցի վերանորոգում:</u>

Այս նպատակը իրականացնելով կանխատեսում ենք համայնքում բնակչության կենսամակարդակի բարձրացում, խթանում ենք համայնքում գյուղատնտեսության զարգացումը և կունենանք բնակչության բավարարվածությունը կենցաղային ջրի մատակարարումից:

Խնդրի լուծման համար անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ

Համայնքում խմելու ջրի ներտնտեսային համակարգի խողովակաշարերի մաշվածությունը շատ մեծ է և ջրի կորուստների մակարդակը հասնում է 70%-ի, անձրևաջրերն ու կեղտաջրերը ներ են թափանցում խմելու ջրի ցանց՝ վտանգ սպառնալով բնակչության առողջությանը: Ջրամատակարարումը կատարվում է ընդհատումներով՝ շաբաթը 2 անգամ 3 ժամով: Տնտեսությունների մեծամասնությունը օգտվում են միայն այդ համակարգի ջրի մատակարարումից:

Վերանորոգելով ջրագիծը և շրջապատում առկա աղբյուրները միացնելով գործող համակարգին համայնքում կունենանք շուրջօրյա ջրամատակարարում: Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ կլինի ձեռք բերել 7կմ երկարության խողովակներ:

Ծրագիրը նախատեսում ենք իրականցնել 2019 թվականին:

Ծրագրի իրականացման համար կանխատեսում ենք 10 մլն. դրամի չափով գումար:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները հայտնի չեն, ընթանում են բանակցություններ:

4.<u>Համայնքի բարեկարգում՝ Ոռոգման ջրագծի վերանորոգում:</u>

Ոռոգման ջրագիծը վերանորոգելով համայնքում դարձյալ կխթանենք գյուղատնտեսության զարգացմանը: Ավելի շատ հողատարածքներում գյուղատնտեսական կուլտուրաներ կմշակվեն, բնակչութկունը կունենա եկամտի աճ:

Ներկայիս ոռոգման ցանցի խողովաշարերը գտնվում են անմխիթար վիճակում, բազմաթիվ տեղերում ունենք խցանումներ և պատռվածքներ, ունենում ենք ջրի մեծ կորուստներ, որի արդյունքում բնակիչները լիարժեք չեն օգտվում ոռոգման համակարգից և արդյունքում չորանում են ցանքատարածքները ու ունենում են բերքի մեծ կորուստներ:

Իրականացնելով այս ծրագիրը՝ այն է 1 կմ հատվածի վերանորոգման և 500 մ հատվածում խողովակներ անց կացնելու համար նոր խողովակաշարեր ձեռք բերելով , կկարողանաք ապահովել համայնքում առկա գյուղ.նրանակության հողերի 40%-ի և տնամերձ հողամասերի լիարժեք ոռոգումը:

Ծրագիրը նախատեսում ենք իրականցնել 2020 թվականին:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է կլինի 5 մլն. դրամի չափով գումար:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները հայտնի չեն, ընթանում են բանակցություններ:

5.Հանդիսությունների տան վերանորոգում

Վերանորոգելով հանդիսությունների տունը համայնքի բնակչությունը կունենա բավարարվածության զգացողություն իր հանդիսությունները կազմակերպելով բարեկարգ, գեղեցիկ ու հարմարավետ սրահում :

Բարձր խոնավությունից ներկայիս սրահի պատերի ծեփաշերտերը թափվում են , խոհանոցում չկան սալօջախներ, սպասքը ճաքճքած և հնացած է:

Իրականացնելով այս ծրագիրը կունենանք հարդարված, նոր խոհանոցային սպասքով, գույքով կահավորված հանդիսությունների սրահ, ուր բնակիչները ավելի հաճախ կկազմակերպեն իրենց հանդիսությունները և ավելի քիչ կօգտվեն Կապան քաղաքի սրահներից ու կխնայեն տնտեսությունների համար զգալի գումարներ:

Ծրագիրը նախատեսում ենք իրականցնել 2021 թվականին:

Ծրագրի իրականացման համար կանխատեսում ենք 2 մլն. դրամի չափով գումար:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները հայտնի չեն, ընթանում են բանակցություններ:

4.ՀԶԾ ֆինանսավորում

Հստակ սահմանել, թե ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերն ի՞նչ միջոցներով են ֆինանսավորվելու՝

Առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսված է համայնքի զարգացման համար կատարել հետևյալ ծրագրերը՝

Հ/հ	Ծրագրի անվանումը	Գումարը / մլն.հհ դրամ/	Ֆինանսավորման աղբյուրները	
			Բարեգործություն, նվիրատվություն	Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցություն
1.	Գյուղտեխնիկայի ձեռք բերում	25.0		25.0
2.	Եկեղեցու վերանորոգում	55.0	55.0	
3.	Խմելու ջրի ցանցի վերանորոգում	10.0	10.0	
4.	Ոռոգման ջրագծի վերանորոգում	5.0	5.0	
5.	Հանդիսությունների տան վերանորոգում	2.0	2.0	
	Ընդամենը	97.0	72.0	25.0

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար ֆինանսական առկա միջոցներ չկան, ուստի դրանք իրականացման համար անհրաժեշտ է գումար հայթաթել;

Գյուղտեխնիկայի ձեռք բերման համար ֆինանսական միջոցների ապահովումը կանխատեսում ենք պետություն-համայնք- մասնավոր հատված շրջանակներում ՀՊՄԿ-ի կողմից կատարվող ներդրումներով, որոնց հետ տարվում է բանակցություններ: Մնացած ծրագրերի իրականացման համար ֆինանսական միջոցների հայթհայթման աղբյուրները հայտնի չեն, փնտրտուքների մեջ ենք:

ՀՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերն իրականացնելով համայնքում մի շարք պարտադիր խնդիրներին լուծում կտրվի՝

1. Կբարեկարգվի համայնքը

2. Գյուղատնտեսության զարգացումը կխթանվի

3.Զբոսաշրջության զարգացումը կխթանվի

Հնգամյա կտրվածքով նախատեսում ենք յուրաքանչյուր տարի իրականացնել մեկ ծրագիր և ֆինանսական միջոցների առկայության դեպքում այն ուղղել կոնկրետ ծրագրի լուծման համար, տալով համայնքում ծրագրի իրականացման արդյունքում պարտադիր խնդրի լուծմանը:

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի գումարը մլն.դրամ	Ծրագրի իրականացման տարին
1	Գյուղտեխնիկայի ձեռք բերում	25.0	2017
2	Եկեղեցու վերանորոգում	55.0	2018
3	Խմելու ջրի ցանցի վերանորոգում	10.0	2019
4	Ոռոգման ջրագծի վերանորոգում	5.0	2020
5	Հանդիսությունների տան վերանորոգում	2.0	2021

5.ՀԶԾ մոնիթորինգ

ՀԶԾ-ի մոնիթորինգիը նախատեսվում է իրականացնել նախատեսված ծրագրերի համար սահմանված ցուցանիշների ձևով, 2017-2021 թվականների ընթացքում , տարեկան դիտարկման սկզբունքով ըստ ՀԶԾ -ի մոնիթորինգի անձնագրի ձևի (կցվում է):

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

«**Գյուղտեխնիկայի ձեռք բերում**»
(Ծրագրի անվանում)

